

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՄԱՍՈՒԼԻ ԷԶԵՐՈՒՄ

Դարձվածքները բառերի կայուն կապակցություններ են, որոնք ժամանակակից հայերենի բառապաշարում ուրույն տեղ են գրավում ոչ միայն իրենց բազմաբանակությամբ, այլև խոսքի մեջ ունեցած տեսակարար կշիռով։ Նշենք, որ հայ լեզվաբանության մեջ դարձվածքների մասին կան մի շարք ուսումնասիրություններ¹։

Դարձվածքի վերջնական սահմանման հարցում միանշանակ եզրակացություն չլինելով համդերձ այնուամենայնիվ մի հարցում բոլոր մասնագետները համաձայն են, այն է՝ դարձվածքները լեզվի ժողովրդայնության արտահայտություններ են։ Մասնավորապես գեղարվեստական խոսքի մասին Ֆ. Խլղաթյանը գրել է. «Գեղարվեստական խոսքում դարձվածքների գործածության շնորհիվ ավելի, քան այլ կերպ հնարավոր է դառնում արտահայտել ժողովրդի ինքնատիպ մտածողության յուրահատկությունները»²։ Սա կարելի է վերագրել բոլոր այն ոճերին, որոնցում ընդհանրապես գործածվում են դարձվածքները։

«Դարձվածաբանությունը սերտ կապ ունի նաև ոճաբանության հետ, քանի որ դարձվածքները (հիմնականում իդեոմատիկ դարձվածքները) պատկանում են լեզվի պատկերավորման միջոցների թվին»³։ Դա նշանակում է, որ դարձվածքները կարող են գործածվել բոլոր ոճերում, որոնցում գործածվում են պատկերավորման համակարգի արտահայտչամիջոցները։ Այդ թվում՝ մամուլի լեզվում, որը միշտ էլ լի է եղել դարձվածքներով, որոնք, ինչպես գիտենք, պատկանում են կայուն կապակցությունների այն տեսակին, որի բաղադրիչները կազմող բառերի նախնական իմաստները ըստ միածուլության տարբեր աստիճանի կարող են կամ ամբողջությամբ մթազնված լինել, կամ էլ՝ մասամբ։ «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանի» հեղինակներն ընդունում են հետևյալ չորս խմբերը դարձվածային միակցություն, դարձվա-

¹ Արտահայտյան Ս. Գ., Դարձվածք։ Դարձվածաբանություն, Եր., 1975 թ.։ Բաղիկյան Խ. ժամանակակից հայերենի դարձվածաբանական միավորները, Եր., 1986 թ.։ Լույսի Դարձվածային ոճաբանություն, 2000 թ.։ Բեդիրյան Պ., ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973 թ.։ Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Եր., 1969 թ.։ Բոսյան Վ., Դարձվածաբանություն, Հայոց լեզու..., մաս 1, պրակ Լ։

² Խլղաթյան Ֆ. Հ., Դ. Նեմիրճյանի «Վարդանանց պատմավեպի լեզուն և ոճը, Եր., 1988, էջ 37։

³ Բոսյան Վ., Նշված աշխատանքը, էջ 28։

ծային միասնություն, դարձվածային կապակցություն և դարձվածային արտահայտություն⁴։ Միակցություն տերմինի փոխարեն գործածվում է նար սերտաճում տերմինը։

Դարձվածքները առատորեն գործածվել են նաև խորհրդահայ մամուլում, ինչը պատշաճ ներկայացված է Ռ. Շալունցի աշխատանքում⁵։ Ըստ Շալունցի, մամուլի էջերում գործածվող դարձվածքներին բնորոշ են. դարձվածքների բովանդակային կողմի կարևորությունը, դարձվածքների՝ այդ թվում նաև ժողովրդական ծագում ունեցող արտահայտությունների մշակվածությունը, գրական լեզվի նորմաներին չհակասելու, նրան համապատասխանելու անհրաժեշտությունը, ընթերցողի զգացումների վրա ներգործելու, նրա մեջ նկարագրվող երևույթի կամ օբյեկտի նկատմամբ համապատասխան վերաբերմունքը և զգացում առաջացնելու պոտենցիալ հնարավորությունը, պատկերավորություն, հուզաարտահայտչական ձևերի առկայությունը, ամենալայն շրջանի լսարանին, բազմահազար ընթերցողներին հասկանալիություն և մատչելիությունը⁶։

Այս գործոնները, իհարկե, առկա են նաև այսօր մերօրյա մամուլում։

Հավասարաչափ գործածվում են թե փոխառյալ և թե բնիկ դարձվածքները։ Փոխառյալ ասելով հասկանում ենք այն դարձվածքները, որոնք պատմական անցած շրջաններում վերցվել են մեր կողմից և այժմ էլ մեզանում ունեն լայն կիրառություն։ Այս կարգի դարձվածքները կարելի է դասակարգել երեք խմբի՝ ավանդված՝ ա) անտիկ աշխարհից (հին հունարեն և լատիներեն), բ) Աստվածաշնչից, գ) եվրոպական լեզուներից։

Բերենք լրագրային օրինակներ։

«Այսօրվա ֆինանսական տոտալիտարիզմի պայմաններում մեր աքիլլեսյան գարշապարը մնում է քաջ զինվորների պակասությունը (ինչպես շեքսպիրյան «Վինձորի զվարճասեր կանայք»- ում)» (Առ., 2368)։ «Ղարաբաղը՝ գորղյան հանգույց» (Առ., 2429)։ «Սեր իշխանությունների գլխին դամոկլյան սրի պես չէր կախվի այդ վտանգը» (Առ., 2319)։ «Թող առաջինը քար նետողը նա լինի» (Առ., 531)։ «Հենց վերջերս դեսպանը այդ հարցից «ծեռքերը լվաց» և ամբողջ պատասխանատվությունը վերագրեց կառավարությանը» (Իր., 1031)։ «Ձեռքերը լվանալու իսկական պատեհություն» (նույն տեղում)։ «Դե՛, երկրին անհրաժեշտության պահին միշտ էլ քափության նոխազներ են պետք» (Հայոց

⁴ Սուքիասյան Ս. Ս., Գալստյան Ս. Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975թ.։

⁵ Շալունց Ռ. Ն., Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Եր., 1987թ.։

⁶ Շալունց Ռ. Ն., Ուշված աշխատանքը, էջ 127.

Աշխ., 1669): «Ես չգիտեմ՝ արդյոք հնարավոր կլինի գտնել ոսկե միջինը. այնպես անել, որ և գայլերը կուշտ լինեն, և գառները ողջ» (Իր., 762): «Այս անգամ որոշել է քավության նոխազ ընտրել Ս.Ս-ին» (ՉԻ., 412): «Սինչև այժմ ամորֆ ու կրավորական դիրք բռնած այս գանգվածը վերջապես արթնացել է լեթարգիական քնից» (ՉԺ., 1046): «Չեմ կարծում, որ Վրաստանի ղեկավարությունը այս պահին էլ ֆորիայի մեջ ընկնի» (Հայոց Աշխ., 1669): «Ժողովրդավարությունը չվայելող ռեժիմներին աջակցելու քաղաքականությունը մատնվել է ֆիասկոյի և հեռանկարային չէ այլևս» (Իր., 1031): «Բնականաբար դափնիներն էլ բաժին կիասնեն հենց կապի և տրանսպորտի նախարարին» (Իր., 684): «Բաց են թողնվել կրիմինալ կապիտալի սանձերը և վերջինիս տրվել է քարտ - բլանշ» (Իր., 684): «Պայքար առաջին ջութակի դերի համար» (Իր., 684): «16 -ը բաժանում է իշխանական գաթան» (Իր., 731): «Փող լվալ» (Իր., 732): «Ընդդիմության դաշտում տեղադրված ական» (Հայոց Աշխ., 1279): «Կատա՞կ բան է. խաղաքարտին ՀՀԸ - ի վերջին բաստիոնն է» (Հայոց Աշխ., 1279): «Ռեստորանային զենեռալ» (Իր., 709): «Գրողները չեն կարող ցանկացած նվազի տակ պարել» (ՉԺ., 1075): «Պաշտոնատիրությունն են լքել խորտակվող նավը» (Իր., 906): «Փաստորեն հրավիրվում են միասին լվալու երկրի կեղտոտ սպիտակեղենը» (Առ., 2205): «Ես ընդունում եմ «տան կեղտը դուրս չբերելու» ավանդույթը» (Առ., 2151): «Կարելի է ասել՝ կտրում է այն ճյուղը, որի վրա նստած է» (Առ., 2205): «Տպավորությունն այնպիսին էր, որ ինքը քանելեռնի դեր էր կատարում. պահին համապատասխան գույնը փոխում էր» (Հայոց Աշխ., 1538): «Նոր են գտել իրենց տեղը արևի տակ» (Առ., 2148): «Եթե մեզ մի քանի նախարարություններ էլ տան, մենք այդ խաղի մեջ չենք մտնի՝ օտարների խաղը խաղալու համար» (Առ., 2148): «Մեր դեմ խաղ չկա»: «Ես-ն խաղ է անում, որոշ ուժեր էլ դառնում են այդ կառույցի ձեռքի խաղալիքը» (ՉԺ., 1098): «Աստիճանաբար արագություն է հավաքում սկանդալի թափանիվը» (Իր., 819): «Այս լավատեսական նուտայով էլ համաժողովն ավարտեց իր աշխատանքը» (Առ., 2070): «Պատվիրակության լիազորությունների հարցը ոչ այլ ինչ է. քան դեղին քարտի ցուցադրում» (ՉԺ., 953): «Ցեղասպանության ճանաչմանն ուղղված մեր արդար պայքարով մեզ հեշտությամբ կարողանում են ծուղակը գցել ու ստիպել պարել ուրիշի դուղուկի տակ» (Առ., 2151): «Թող սին հույսեր չփայփայեն և ընդդիմության համախմբման շուրջ չթափեն կոկորդիլոսի արցունքներ» (Առ., 2150): «Աղբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները շատ հաճախ ռազմատենչ հայտարարություններ են անում միայն ներքին օգտագործման համար» (Առ., 2233): «Այնպես որ, իրադարձություններից այդքան առաջ ընկնել, չարժի»: «Ապրում են խրախճանք ժանտափստի

ժամանակ սկզբունքով» (Առ., 2319): «Նա չէր կարող հասարակական
ատելության սլաքը չուղղել վերջինիս դեմ» (ԶԻ, 412): «Հայտնվել ենք կոտրած
տաշտակի առջեւ» (Իր., 996): «Ճանապարհները կարող են խաչվել, որովհետև
անկանխատեսելի են Աստծո արահետները» (Առ., 2347): «Անշուշտ, նվեր տված
ծիու ատամները չեն հաշվում» (Առ., 2345): «Ժողովրդին դատապարտում են
միջկլանային բախումներում «թնդանոթային միս» դառնալու ողբերգական
դերակատարությանը» (ՀԺ, 822): «Եթե որոշ մարդիկ ցանկանում են պղտոր
ջրում ծուկ որսալ, պետք է գիտենան, որ նույն այդ պղտոր ջուրը մի օր իրենց
քշելու - տանելու է» (Իր., 1090): «Կարող է այնպիսի ալեկոծություն առաջաց-
նել, որ փոքրիկ կայծից իսկապես իսկապես բոց կբռնկվի» (Իր., 1051):

Բնիկ հայերեն դարձվածքների մեջ բավական մեծ թիվ են ներկայացնում
մարդու մարմնի մասերի անվանումներով դարձվածքները: Հայեցողական
մակարդակում արտաքին աշխարհ - սուբյեկտ փոխհարաբերությունները
ուղեղում ֆիքսվում են մարդու մարմնի մասերի անվանումների չափանիշ-
ներով: Մարմնի մասերը յուրատեսակ չափման միավորներ են, միաժամանակ
զանազան հարաբերություններ արտահայտելու լավագույն միջոցներ: Ահա թե
ինչու են դրանք գերակշռում դարձվածքների կազմում⁷:

Բերենք լրագրանյութերից օրինակներ: «Ինքը աչք չի փակի և միշտ
կպայքարի նման երևույթների դեմ» (ՀԺ, 963): «Նրանք պետք է խելքները
գլուխները հավաքեն» (ՀԺ, 963): «Փաստաբանի վրա ատամ են ունեցել» (Առ.,
2070): «Արդեն որերորդ ամիսն է՝ տղերքի լեզուն փաթ է ընկնում» (Հայոց Աշխ.,
1333): «Խնդրեցին, որ իրենց անունները չգցենք մամուլի ու իրենց
նախարարության բերանը» (ՀԺ, 535): «Սենք այս պասիվ, անատամ քայլերով
ոչնչի չենք հասնի» (Առ., 1871): «Վերջապես ոչ ոք չի կարող գուշակել, թե ում
իր ծայրը կտա մարդը» (Առ., 827): «Միշտ չէ, որ գլխարկը զարդարում է
արժանի գլուխ» (Առ., 2213): «Բանակը լուրջ հաջողությունների հասավ մեր
երիտասարդների արյան գնով» (Առ., 2151): «Սակայն փառք ու պատիվ մեր
իշխող կուլիցիային սրտից արյուն հոսելով և շրթունքները կրծոտելով՝ նա
գնաց այդ քայլին» (Առ., 2205): «Խայտառակությունների առջև փակեցին իրենց
աչքերը» (Առ., 2150): «Սեզ թև ու թիկունք չեն կանգնում այս բախտորոշ հարցի
ժամանակ» (Առ., 2150): «Իրենք ձեռք են մեկնում հայերին , բայց այդ ձեռքը
մնում է օդում» (Առ., 2150): «Դիտարկենք հենց ԵՀԿՎ վերջին բանաձևը, ուր մեր
գլուխը մի թեթև շոյել են» (Առ., 2319): «Ժողովրդավարական երկրների գլխին
նույնպես կացնով հարվածում են» (ԶԻ, 412): «Դրանք նվազագույնի հասցնելու

⁷ Տես նաև Խ. Բաղդիկյանի «Դարձվածային ոճաբանություն», էջ 141:

համար պատգամավորներին առաջարկվել է իրար հետ լեզու գտնել և գալ ընդհանուր հայտարարի» (ՉԺ, 1364):

Սրանք, իբրև բառեր, բայական հարադրություններ են, ինչը փաստվել է նաև Ա. Աբրահամյանի կողմից, որը հստակ առանձնացրել է բայական հարադրությունների մի զգալի մասի «դարձվածաբանական» լինելը⁸: Գրեթե նույնն է նաև Արտ. Պապոյանի դասակարգումը, որը հարադրությունները բաժանում է երկու խմբի՝ դարձվածաբանական և ոչ դարձվածաբանական⁹:

Բերենք դրանցից օրինակներ համապատասխան կոնտեքստում՝ փորձելով ընդգծել այն հիմքը, որի վրա այդ դարձվածքները ստեղծվել են: Պարզվում է, որ քաղաքական պայքարում հակառակորդների առաջնայնություն տված լեզվամիջոցներից գլխավորը դարձվածքներն են: Ակնհայտ հեգնանք կա հետևյալ կոնտեքստում բերված դարձվածքներում՝ «Համառոտեն փորձում են ճոճել կայունության նավը երկրում» (Առ., 2161): «Նա (պատգամավորը) աղեի թոշակով չի ապրում»: «Ամեն օր (պատգամավորները) աշխատանքի են գնում և հալալ քրտինքով վաստակում իրենց հացը» (Առ. 2161): Դարձյալ հեգնական երանգով՝ «Ունեն գերազանցիկ սինդրոմ և նույնիսկ ձկի մեջ մազ են փնտրում»: Կա նաև «Հայրենի արմատականներ, կանուրջները այրել չի կարելի» (Հայոց Աշխ., 1611):

Ցանկանալով ընդգծել անկայունության տնտեսական վնասները՝ պետական այրը գործածում է հետևյալ դարձվածքը՝ «Լարվածությունը խփում է բոլորի գրպանին»: Նույն խփել բայը՝ մեկ այլ դարձվածքում. «Ու հիմա այդ նույն միջազգային հանրությունը խփում է մեր ամենացավոտ տեղին՝ Ղարաբաղին» (ՉԺ, 1223): Քաղաքական գործիչը իր մասին ասում է՝ «Ես աշխատել ու աշխատում եմ մեծ հոգի դրած»: ԱՄՆ նախագահի՝ բանակից խուսափած լինելու փաստի քննարկման ժամանակ բերված են հետևյալ դարձվածքները՝ «Կրակին յուղ լցրեց նաև տեխասյան ավիաբազայի ղեկավարը՝ ասելով, որ երբեք իրեն վստահված օբյեկտի տարածքում Բուշի երեսը չի տեսել, թեև չբացառեց, որ, հնարավոր է, իրենց ճանապարհները պարզապես չեն խաչվել» (Առ., 2160): Ներքոնշյալ դարձվածքները լայն կիրառություն ունեն՝ «Հիմա էլ դող է գալիս վրաս, հիշելով այն իրավիճակը, երբ թշնամին կանգնած էր մեր առաջ, իսկ թիկունքում մեր քաղաքական ուժերն իրար միս էին ուտում» (Հայոց Աշխ., 1669): «Լոսանջլեսյան արմատական թևին էլ մնում է իրենց գործողություններով յուղ քսել տեղի թուրքական

⁸ Աբրահամյան Ա. Ա. Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 168:

⁹ Պապոյան Արտ., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1970, էջ 82:

համայնքի սրտին»։ «Բայց որ դրան էլ դեմ գնացին, ինչ արած, կարելի է այդ կարմիր հեղուկի բեռի տակ մտնել»։ «Յուսանք, որ իշխանությունն ու ընդդիմությունը, ի հեճուկս երկրիս ապակայունացմամբ շահագրգիռ ուժերի, ընդհանուր լեզու կգտնեն» «Իր թեկնածուին «ընտրված նախագահ» հռչակելով՝ երկու ոտը մի մաշիկի մեջ են դրել»։ «Եթե հասկանում են, բայց շարունակում են թշնամու ջրաղացին ջուր լցնել, շատ վատ է»։ «Այդ ոգևորության մեջ հստակ ենթատեքստեր կան, եւ դրանք պետք է ջրի երես հանել»։ (Հայոց Աշխ., 1669)։ «Ես չեմ կարծում, որ այսօրվա Սահմանադրությունը մեր բոլոր դարդուցավերի հիմնական պատճառն է» (Առ., 2150)։

Նկատի առնելով քաղաքական գործիչների՝ միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքը՝ գործածված է հետևյալ դարձվածքը՝ «Քաղաքական գործիչները միմյանց դեմ սուր են ճոճում» (Առ., 2162)։ «Սիւս այս կարգի ուժերն են, որ երբ ամեն ինչ ավարտված կլինի, կսկսեն իրենց բռնկոնքները ճոճել» (Հժ, 1081)։ «Ստրասբուրգում մեր պատվիրակության ներկայացուցիչն արդեն հասցրել էր աջբալուսանք ուղարկել հայրենի իշխանություններին ընդդիմության միջազգային փառահեղ տապալման համար» (Հժ, 1081)։ «Սույն անձնավորությունը, որը երկրից փախել է սովի, ցրտի և խավարի տարիներին, այսօր արդեն օվկիանոսի այն կողմից մատ է թափ տալիս» (Հայոց Աշխ., 1669)

Քաղաքական պայքարի արտահայտություններ են հետևյալ դարձվածքները՝ «Տա իր այդ «բարի» քայլը որակեց ընդդիմությանը մեկնված օգնության ձեռք»։ «Ընդդիմությունը սպասում է քաղցրաբլիթի» (Հժ, 1103)։ «Ընդդիմությանը դավաճանի պիտակ են փորձում կպցնել՝ իբր կեղտոտ սպիտակեղենը հանում են դուրս» (Առ., 2348)։ «Ստամբուլի ցուցադրումը շարունակվում է» (Հժ, 1075)։ «Ընդդիմության մեղրամիսը երկար չի տևի» (Հժ, 1075)։ «Այդ ո՞վ է տեսել, որ ընդդիմությունն իր քիթը մտցնի նման հարցերի մեջ (նույն տեղում)։ «Տա փորձել է ընդամենը աջակցել դաշինքին՝ ծախու ընդդիմության պիտակից սզատվելու համար» (Հժ, 953), «Իհարկե պրն Ա.-ն երբեք չի փոխարինի իշխանամետի հարմարավետ կոստյումը ընդդիմադիրի բանտահոտ շապիկի հետ» (ԶԻ)

Միջազգային հարաբերությունների արդյունքում ձևավորված դարձվածքներ՝ «Այնպես որ Հայաստանը միակն է, որ Ռուսաստանը սիրում է կանացի սիրով» (Հժ, 1008)։ «Նրա համար Մոսկվան սկիզբն ու վերջն է աշխարհի, ինչպես Երուսաղեմը՝ հավատացյալների համար» (Հժ, 1008)։ «Մոտ ենք վրացական հանգուցալուծմանը» (Առ., 2031)։ «Ռուսաստանը պիտի դադարի կթու կով լինել բոլորի համար» (Առ., 2162)։ «Սա կարծես քիչ է Ռուսաստանի հանդեպ քնքուշ սեր տածող մեր գործիչների համար» (Առ.,

2162): «Թե՞ թողնել բոլորին եւ գնալ ամերիկացիների դուռը» (Առ., 2162): «Եթե Թուրքիայի մեկնած բարեկամության ձեռքը անպատասխան չմնա» (Առ., 2150):

Նորակազմ են հետևյալ դարձվածքները՝ «ԼՂ հարցում նա կոչ է անում մերժել «կկվային քաղաքականությունը», ըստ որի, պետք է ինչ-որ բան զիջել՝ մնացածը պահելու համար» (ՀԺ, 1223): «Տա Աստված, որ Եվրախորհրդի միջնորդական ջանքերով հայոց աշխարհը ի վերջո ազատվի ինքնակերության հայկական հիվանդությունից»: «Մարդասիրական դեղերը երբեմն այնքան են «հմանում», որ դրանցից քրեական հոտ է գալիս» (Առ., 2345): «Լիզիտիմության քաղցով տառապող պաշտոնյան անկարող է» (ՀԺ, 1223): «Բանտը կարոտում է քեզ» (ՀԺ, 1198): «Թե ինչպես կարելի է ճորտության ներարկումով անկախության հասնել, ցույց է տվել մեր պատմությունը» (ՀԺ, 1223): Գործընկերոջ փոխարեն որևէ պատգամավորի քվեարկելը, որ արտահայտվում է կոճակներ սեղմելով, մեր իրականության մեջ նոր երևույթ է, ուստի և դարձվածքն է նոր մեյ: իրականության մեջ: «Խորհրդարանականները չեն կարողանում խուսափել իրենց վատ սովորույթից. այն է՝ գրանցվելիս սեղմել հնարավորինս շատ պատգամավորական կոճակներ» (Իր., 1031):

Քաղաքական գործիչը ասում է մեկ ուրիշ գործչին. «Քրեական օրենսգիրքը լացում է քեզ համար»: Նախկինում դատապարտված քաղաքական գործիչն Ազգային անվտանգության ծառայության պետին հարցնում է՝ «Ինչպե՞ս է կամերս (բանտախուց - Յու.Դ.)»: Վերջինս պատասխանում է. «Լավ է, կարոտում է քեզ» (Առ., 2329): Դանապետության նախագահի խոսքն ուղղված նախկին քաղաքապետերից մեկին. «Փողի վրա նստած փող են ուզում»: «Կոռուպցիայի դեմ բուն պայքարը «մուկ տշոցի» է, իսկ այդ պայքարի մասին պաշտոնական քարոզչությունը՝ «յուղ վառոցի»» (ՀԺ, 1261): «Երկիրը ստատուս - քվոյի փակուղում» (Առ., 2453):

Թերևս վերջին ժամանակներս է ձևավորվել «իրեն չլանգի տեղ դնել» խոսակցական ոճում գործածվող դարձվածքը: Թեթևակի փոփոխությամբ գործածված է՝ «Եթե չեն հասկանում և իրենց ռետինն խողովակի տեղ են դրել, ուրեմն դա իրենց պրոբլեմն է» (ԶԻ, 412):

Նշելով նախարարներից մեկի ձեռք բերած խիստ թանկարժեք մեքենայի մասին՝ բերված է հետևյալ դարձվածքը. «Սակայն ակնհայտ է, որ այստեղից կոռուպցիայի հոտ է գալիս» (ՀԺ, 1075):

Տարածված է հետևից ինչ-որ մեկի ականջների երևալը դարձվածքը՝ «Վրդարություն» դաշինքի ետևից չեն երևա ԲՀԸ - ի ականջները» (ՀԺ, 1048): «Էլ չենք ասում ԲՀԸ-ի մասին, որի ականջները իշխանավորները փոքր-ինչ պարանոյիկ հետևողականությամբ նշմարվում են բոլոր ընդդիմադիրների

հետևում» (Առ., 2363): «Տուժող կողմը հայտարարեց, թե ուն հեռահար ականջներն են երևում պայթյունի հետևից» (ԶԻ, 428): «Ըստ ՀՀԸ-ի, որի «ականջներն» անվերջ առկա են բոլոր շրջաններում» (Օրրան, 184): «Որքան էլ իշխանությունները տնտեսական, ժողովրդավարական և այլ աճերի թվեր նկարեն, դրանց հետևից երևում են սոսկալի աստիճանի ընչազդկության «ականջները» (Իր., ՀՊ, 1112):

Ամփոփելով նշենք, որ, իբրև լեզվի ժողովրդայնության արտահայտություններ, դարձվածքները լայնորեն գործածվում են նաև մամուլում: Մամուլի էջերը պարզապես ողողված են անտիկ աշխարհից, Աստվածաշնչից, տարբեր ժամանակներում եվրոպական լեզուներից ավանդված դարձվածքներով: Դրանք փաստորեն անփոխարինելի գործիքներ են քաղաքական պայքարում: Ընդ որում հաճախ այնքան են դիպուկ, որ, թվում է, ստեղծված են հատկապես այդ ոլորտում գործածվելու համար:

Օգտագործված գրականության ցանկը

1. Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962թ.:
2. Աբրահամյան Ա. Գ., Դարձվածք: Դարձվածքաբանություն, Եր., 1975 թ.:
3. Բաղիկյան Խ.Գ., ժամանակակից հայերենի դարձվածքաբանական միավորները, Եր., 1986 թ.:
4. Բաղիկյան Խ. Գ., Դարձվածային ոճաբանություն, 2000թ.:
5. Բեդիրյան Պ. Ա., ժամանակակից հայերենի դարձվածքաբանություն, Եր., 1973 թ.:
6. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Եր., 1969 թ.:
7. Խլղաթյան Ֆ. Հ., Դ. Ղեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Եր., 1988թ.:
8. Շալունց Ռ. Ն., Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Եր., 1987թ.:
9. Պապոյան Արտ., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1970թ.
10. Զոսյան Վ.Ա., Դարձվածքաբանություն, Հայոց լեզու., մաս 1, պրակ Ա:
11. Սուքիասյանի Ա.Ա., Գալստյան Ա.Ա., «Հայոց լեզվի դարձվածքաբանական բառարան», Եր., 1975թ.: